

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

ՄԱՌ, Նիկ., պրոֆեսոր Հայերենի ի համալսարանին Պետերբուրգի. Վանաձորին ուղևորութիւնից զէպի Հայաստան կատարողութիւններ և քաղաքներ հայկական ձեռագրերից: Թարգմ. Ոստիկոս Անտիկան, Վիեննա, Միլիթարեան տպ. 1892 թ. ութածալ, 90 էջ, գինն է 1 Ֆր.:

Մեր հին գրականութեան ուսումնասիրութեան համար ներկայացող շատ դժարութիւնների թւում կաւ և այն մեծ դժարութիւնը, որ ալդ գրականութեան մի նշանաւոր մասը դեռ մնում է ձեռագիրներում:

Արդարեւ մեր հին մատենագիրներից շատերը վաղուց են արդէն հրատարակւած, նրանցից մի քանիսը մինչև անգամ քննադատաբար ուսումնասիրւած են, թէև դեռ խընդիր է թէ որքան են համապատասխանում գիտութեան ալթմեան պահանջներին ալդ հրատարակութիւններն ու ուսումնասիրութիւնները, բայց ալդ քիչն էլ չենք կարող ասել միջնադարեան և նոր հալոց մի շարք մատենագիրների, թարգմանիչների ու կոմպիլատորների մասին, որոնց գրածները դեռ ընկած են աչք կամ աչք վանքի մոռացւած անկիւնում և որոնց մենք կամ անունով ենք լուր ճանաչում կամ ամենևին չենք ճա-

նաչում: Բաւական է միայն վիշել թէ որքան հարուստ է մեր հին անվաւերականների (ապոկրիֆների) գրականութիւնը և որքան քիչ բան է լուր ընծաւած ալդ գրականութիւնից և որքան ևս առաւել քիչ բան ուսումնասիրւած... Կամ վերցրէք վերջին դարերի ռամկախառն գրաւիտ կամ գրաւիտախառն ռամկութեն մի շարք արձակ և ոտանաւոր շարագրութիւնները, որոնցով լի են մեր ձեռագիրները՝ քանի հատ կը գրուինէք ալդ շարագրութիւններից տպագրւած և բանասէրներին մատչելի արած... Մինչդեռ ալդ և ալդ տեսակ գրւածների հրատարակութեամբ կարելի էր լանհոռն ընդարձակել հետազոտութեան շրջանը, լուր սովեւել քաղաքական, եկեղեցական և գրականութեան պատմութեան շատ մութ կողմերի վրա և անպառ նիւթեր մատակարարելով բազմադան ու բազմատեսակ կուլտուրական, լեզւաբանական և

աղագրական երևութների համեմատական ուսումնասիրութեան համար:

Ապասելով անլի բարեպատեհ հանգամանքների, որ մեր գրչագիրների մեծագույն մասը մտնեն տպագրական մամուլի տակ՝ պէտք է շնորհակալ լինել ան օգտակար գործի համար, որ ձեռնարկեց վերջերս Վիեննայի Միլիթարեան միաբանութիւնը՝ լոյս ընծայելով եւրոպական զանազան գրադարանների հալերէն գրչագրաց ցուցակները և դրանով գէթ թեթեակի ծանօթացնելով բանասէրներին գրչագիրների ներքին և արտաքին առանձնատկութիւններին: Որքան մանրամասն լինեն ակդ տեսակ ցուցակները, անքան շատ բանասիրական հարցերի բաւարարութիւն կը տան. բայց մանրամասնութիւնը անհրաժեշտ պայման պիտի լինի մանաւանդ ան դէպքում, երբ գրչագիրը մի դեռ ևս չը տպագրւած երկ է բովանդակում:

Անշուշտ մինեղն տեսակէտն է ունեցել և մեր առաջ դրած գրքովի հեղինակ պրոֆ. Ն. Մառը, որ 1890 թվի դարնանը և ամառը Սեան և Էջմիածին եղած ժամանակ պարապել է հալերէն ձեռագիրների ուսումնասիրութեամբ և նրանց միջից քաղածներ անելով: Հեղինակի գիտական ուղեորութեան գլխաւոր նպատակն է եղել՝ ժողովել նիւթեր հալ առակների և առածների մատենագրութիւնից՝ գրականութեան ակդ ճիւղի ուսումնասիրութեան նւիրած իր մի մասնագիտական աշխատութեան համար: Սակայն ակ գրքովի մէջ ակ նիւթերը չեն տեղ գտել, ակ ակ մանր նկատողութիւն:

ներն ու քաղածները ¹⁾, որ նա արել է իր «հանգստեան ժամերին» գլխաւոր պարագմունքներից լսողութեան ցարար հեղինակի նկատողութիւնների ամենահետաքրքրական մասը՝ Խորենացու «Պատմութեան» տպագիր օրինակի և Սարգիս սրբազանի մի ձեռագրի համեմատութիւնը, որ ակ. Մառ արել է միաբան Գալուստ Մկրտչեանի էական օգնութեամբ, դուրս է ձգած գրքովից: Սակայն ակտեղ էլ կան մի քանի հետաքրքրական նկատողութիւններ և քաղածներ, որոնց վրայ արժէ կանգ առնել: Այսպէս է օրինակ՝ Գ. հատաժը՝ Թււ և Լւաց երգերի մասին, Գ. Բաջերի և Արտաւազդի մասին, Թ. Յովսէփ և Ասանէթ, ԺԳ. Պետրոս առաքեալի երազը, ԺԳ. Ս. Գրիգորի տեսիլը և Հոգու ու մարմնի վէճը և ակն:

Չի կարելի ասել, որ ակ. Մառի արած քաղածները կարեւոր լինէին և հասկանալի է թէ ինչու ամառնալիս ուղեորութեան սերկու երեք ամիսը, ինչպէս նա ինքն է խոստովանում, շատ կարճ ժամանակամիջոց է քանի մի հազար ձեռագրերի հաւածով հետ ծանօթանալու և ամեն կարեւոր բաները դուրս բերելու համար. և եթէ ակ ճշմարիտ է ընդհանրապէս, մանաւանդ ճշմարիտ է

¹⁾ Այդ նկատողութիւններն ու քաղածները հեղինակը տպագրել է «Записки восточн. отд. имп. русск. археолог. общ.» հրատարակութեան V հատ. էջ 211—241 և VI, 135—228:

անս քաղաածներն նկատմամբ, որ հեղինակը արեւ է ազատ ժամերին: Սակաւն մի բան, որ չի կարելի արդարացնել ոչ ուղեորութեան «ամառնակին» լինելովը, ոչ էլ ժամանակի կարծութեամբ՝ ալդ ալն կանխահաս նկատողութիւններն են, որ տեղ տեղ թուլ է տալիս իրան՝ անել պ. Մառը Ալսպէս օրինակ՝ խօսելով թւելեաց երգերի մասին, պ. Մառը չի հաւանում ճախորդ գիտնականներին՝ խորհնացու ալս խօսքին տւած մեկնութիւններին և ինքը թւելիք բառը լառաջ է բերում («ես լառաջ եմ բերում») թուել բալից. ալս երկու բառերը, ասում է պ. Մառ, հակական հին քերթողութեան մէջ, ըստ երեւութիւն ունէին առանձին նշանակութիւն և ցոյց էին տալիս ոտանաւոր լօրինելու կամ արտասանելու եղանակներից մէկը, բայց թէ նոքա երգելով կարդալուն, ասելուն, թէ պերճասացութեան (déclamation) էին վերաբերում, չեմ կարող ասել...» Ի՞նչ օգուտ ալս տեսակ նկատողութիւններից... կարող ենք հաւատացնել պ. Մառին, որ թուելեաց երգք տերմինը խորհնացուն է միայն պատկանում և «հակական հին քերթողութեան մէջ» նա ոչինչ առանձին նշանակութիւն չ'ունէր: Մի և նորն երգերը, որ խորհնացին անւանում է ուրիշ տեղերում երգք վիպասանաց նա մի տեղում միայն անւանում է երգք թուելեաց. դրանք միեւնոյն՝ Գողթան երգերն են: Ապացոյց՝ որ իր պատմութեան երկրորդ գրքում նորից վիպատակութիւն անելով Արտաշիսի

և Սաթիւնիկի մասին՝ նոյն խորհնացին աւելացնում է որ նրանց լարաբերութիւնները չալտին են Գողթնում երգող վիպասանաց երգերից և ալդ միեւնոյն երգերն են, որ առաջ խորհնացին անւանեց թւելեաց երգք: ¹⁾ Արդեօք թւելիք բառը ինչ մտքով է գործածում խորհնացին... մենք ալս խնդրին դեռ կը վերադառնանք: ²⁾ Ալս նկատողութեամբ մենք կամեցանք միայն ցոյց տալ՝ թէ ինչպէս պ. Մառը հապճեպով ենթադրութիւններ է անում՝ առանց հիմնաւորապէս ուսումնասիրելու Մի ուրիշ օրինակ:

Թուելեաց երգերի էութիւնը չը որոշած, պ. Մառը փորձում է «եօթնոտեան չափով» վերաբառադրել ալդ երգերից մինը խորհնացու տեքստի հիման վրա և ահա նա առաջարկում է կարդալ.

«Ճաշ գործեալ Արդաւանայ
Ի պատիւ Արտաշիսի
Խարդաւանակ լեալ նմին
Ի տաճարին վիշապաց...» ³⁾

¹⁾ Հմմտ. խորհնացի, Ա. Լ. և Բ. խթ. Տէս նոյնպէս Պալասանեանի «Հալոց Գրականութեան Պատմութիւնը»:

²⁾ Փաւստոս մի և նոյն թուելեաց երգերն ի նկատի ունէր ասելով. «և զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք»...

³⁾ խորհնացու տեքստում. «Ալլ և ճաշ, ասեն, գործեալ Արդաւանայ՝ Ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ... որտեղ գործեալ և լեալ ձեռքը կախում ունեն ասեն բալից. էլ ինչպէս կարելի է անարատութեամբ վերաբառադրել երգի բուն

Սև սա անւանում է թւելաց երգ
 Եօթնոտեան չափով՝ Նթէ աղպէս է
 վարում նախնական տեքստերի հետ
 Պետերբուրգի համալսարանի պրոֆ.
 պ. Ն. Մառը, ինչ զարմանք, որ
 վաղն էլ մի ուրիշը դուրս գալ ու
 լրջօրէն ապացուցանի որ խորենա-
 ցու ամբողջ «Պատմութիւնը» ոչ ալ
 ինչ է, եթէ ոչ Եօթնոտեան չափով
 գրած՝ թւելաց երգ... Հաւատացած
 եմ, որ ճշմարտութիւնից աւելի հե-
 աացած չի լինիլ քան պ. Մառը:

Նոյնքան կամալական է չարգելի
 գիտնականի առաջարկած այն ուղ-
 ղագրութիւնը, որ նա մտցնում է
 Արտաշիսի լատնի անէծքի խօսքերի
 մէջ որ առաջ է բերում խորենացին:
 Պր. Մառը առաջարկում է ուղղել:

Դու լորս հեծցիս լաղատ ի վեր
 'ի Մասիս,
 Զքեզ կալցին քաջք, տարցին
 լաղատ 'ի Մասիս,

և իբր թէ ալ ուղղագրութեամբ «բո-
 լոր անտեղութիւնները կը վերանան,
 անէծքի իւրաքանչիւր խօսքը իմաստ
 կ'ընդունի և կը բերէ մի ինչ որ Նոր
 օրհասական դրութիւն, և մանաւանդ
 թէ կը ստանալ չափ...» Ընդունենք
 մի ըոպէ որ ալք բոլորը ճիշտ է,
 բալց ներեցէք, եթէ հարցնենք, ով
 է ձեզ իրաւունք տւել աղպէս ան-
 ցե բեմոն վարել խորենացու տեք-
 ստի հետ...

Պր. Մառը պէտք է իմանալ, որ
 մեր նկատողութիւնները միանգա-
 մայն բարեմիտ են. «որում շատ տւաւ,
 շատ պահանջեսցի...» Մենք շատ լու-

խօսքերը, ալն էլ Եօթնոտեան
 չափով:

սեր ունենք պ. Մառի վրա և օգ-
 տում ենք դէպքից՝ վկայելու որ
 օտարազգի հալագէտների մէջ նա
 միակն է, որ բացի գրափառից՝ գե-
 ղեցիկ կարգում և գրում է նաև աշ-
 խարահառու Հալագիտութիւնը շատ
 սպասելիք ունի պրոֆ. Գերովլէ
 Պատկանեանի արժանաւոր աշակեր-
 տից և արժանաւոր լաջորդից:

«Մուրճ»-ի ընթերցողներին մնք
 աւելի լաւ ընծայ չենք կարող տալ
 պ. Մառի ալս գրքոյկից քան հե-
 տեհալ գողորիկ՝ Ժողովրդական ոճով
 գրած ոտանաւորը՝ որ նա հանել է
 վերջին դարերի հալ բանաստեղծու-
 թիւնների մի ձեռագիր հաւաքածուից:

Պետրոս Երազէ Երազէ:

«Պետրոս Երազէ տեսեր,
 Նլեալ պատմէր Պաւղոսին,
 Փոքրիկ ալգի մի տեսալ,
 Փոքրիկ հընձան մի վերալ,
 Փոքրիկ հընձանին վերալ
 Բարակ առուակ մի տեսալ.
 Յալն բարակ առուին վերալ
 Նոր բարունակ մի տեսալ.
 Նոր բարունակին վերալ
 Ոսկի ողկոլ մի տեսալ.
 Ոսկի ողկոլին վերալ
 Խալտ աղաւնի մի տեսալ.
 Պատասխանեալ Պաւղոսին.
 Պետրոս, Երազէ ի բարին.
 Հրեշտակալին է տեսիլդ.
 Զփոքրիկ ալգին որ տեսար՝
 Նրոսաղէմ քաղաքն է.
 Զփոքրիկ հընձանն որ տեսար՝
 Սողոմոնի տաճարն է.
 Զբարակ առուն որ տեսար՝
 Գետ Յորդանան աղբիւրն է.
 Զնոր բարունակ որ տեսար՝

Աստուածածին սուրբ Կոլսն է.
 Զոսկի ողկուղն որ տեսար՝
 Իւր միածին որդին է:
 Զխալտ աղաւնին որ տեսար՝

Մըխիթարիչ հոգին է.
 Պետրոս երազդ ի բարին.
 Հրեշտակալին քո տեսիլդ:
 Վալ

ՇԻՐԱԿԵՑԻ.—«Մարօ»։ Պատկերներ իրական կեանքից։ Ալեքսանդրապոլ, տպ. Սանոյեանցի, գինն է 50 կոպէկ։

Նրբ վիպասանը ձեռն է առնում գրիչը, նա կամենում է կամ խորը թափանցել մարդու հոգու մէջ և երեան հանել հոգու բոլոր շարժումները, գլխաւորապէս մարդու ներքին աշխարհի հետ դործ ունի աչն հեղինակը, որ պատկանում է վէպի հոգեբանական ուղղութեանը (Դոստոևսկի)։ Կամ երբեմն վիպասանին հետաքրքրում է բոլորովին ալ բան, նա գրում է բոլորովին ալ դիտաւորութեամբ, Նա ցանկանում կանաքի մէջ իրականացած տեսնել որոշ գաղափարներ։ Նա ալք բանը անում է վէպի միջոցով. հոգեբանական վերլուծութիւնը ալ ևս առաջին տեղը չէ բռնում։ Սա է տենդենցիական վէպի առանձնապատկութիւնը. ալս ուղղութեամբ էր գրում մեր Բաֆֆին, ալս ուղղութեան է պատկանում և Բեկամին («Ապագայ դար»)։ Կալ և մի ալ ուղղութիւն—նատուրալիստականը (Զոլա). սորա նպատակն է տալ կեանքի նկարագիր, բաց նկարագիր, որ հիմնւած է կեանքի լուրջ ուսումնասիրութեան վերալ։ Սակալն որ ուղղութեան էլ կողմնակից լինի վիպասանը, եթէ

կամենում է հետաքրքրական և օգտաւէտ լինել, նա պէտք է դէմ դնալ գեղարւեստի աչն օրէնքներին, առանց որոնց չէ կարող իրականանալ գեղեցկի գաղափարը. ալք օրէնքները սորա կամ նորա քմահաճութիւնը չեն. նոքա բղխում են գեղարւեստի էութիւնից, նոքա վաւերացրած են հանճարների հրաշալի օրինակներով։ Եթէ վիպասանը իրար ետեից շարում է եղելութիւններ, խօսեցնում գործող անձանց և ալք բոլորը նա անում է ալեպէս, որ ոչ դէպքերը, ոչ խօսակցութիւնները իրար հետ չեն հետևում, աչն ժամանակ, ի հարկէ, երկասիրութիւնը մատնւած է անհետաքրքրութեան, և հեղինակը ինքն է իր ձեռքով առաջին մահաբեր հարածը տալիս իր գրածքին։

Ալքալիսի մահաբեր հարած է հասցնում իւր գրածքին և «Մարօ» հեղինակը։ Ալս պատկերը՝ ոչ մի տպաւորութիւն չէ թողնում ընթերցումից լետով. կարդաս չը կարդաս—մի հաշիւ է։ Ի՞նչ է նորա անհետաքրքրութեան պատճառը։ Պատճառը շատ հասարակ է. Նրբ